ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ARMENISCHER
KULTURVEREIN
IN HESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

Շրջաբերական թիվ 1 / 2013

Վարչութիւն/Der Vorstand
Ֆրանկֆուրտ, 2013թ. հունվարի 31

Սիրելի միութենականներ և հայրենակիցներ,

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2013թ. փետրվարի 10-ին՝
շաբաթ՝ ժամը՝ 12:00-ին

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում.

ժամը 14:00-ին

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ
Շաբաթօրյա դպրոցի սաներին կհանձնվեն տարեկան վկայագրերը, և միասնական կնշենք բարեկենդանը զանազան խրախճանքներով, խաղերով, երաշտությամբ և համեղ ուտեստներով: ՈՒրախ կլինենք, որ բոլոր մասնակիցները ներկայանան դիմակավորված և զգեստավորված:
Հասցեն՝ Ֆրանկֆուրտ-Հաուզեն եկեղեցի՝ Alt-Hausen 3-5, Frankfurt/M.-Hausen:

2013թ. մարտի 16-ին՝
շաբաթ՝ ժամը 17:00-ին

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ» ՇՈՒՐՋ

Հայ կինոյի շարքից կցուցադրվի «Սայաթ Նովա» կինոնկարը՝ նվիրված «Երգի արքա» Սայաթ Նովայի ծննդյան 300-ամյակի առթիվ:
Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2013թ. ապրիլի 14-ին՝
կիրակի՝ ժամը 12-00-ին

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում՝

ժամը 14:00-ին

ՀՈՒՇ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ 1915թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 98- ՏԱՐԵԼԻՑԻՆ՝ միության անդամների և շաբաթօրյա դպրոցի աշակերտների մասնակցությամբ:
Հասցեն՝ Ֆրանկֆուրտ-Հաուզեն եկեղեցի՝ Alt-Hausen 3-5, Frankfurt/M.-Hausen:

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետևեք մեր ինտերնետային կայքին՝ www.armenia.de)

1. Vorsitzende: Lusine Vardumyan
2. Vorsitzender: Mher Beglaryan, Tel.: 0160- 99 53 55 52
Schriftführer: Armin Preuß
Schatzmeisterin: Evet Dujak, Tel.: 0163- 60 44 166
Beisitzer: Vahe Katschaturian
Bankverbindung: Frankfurter Sparkasse, Konto-Nr. 169 417, BLZ 500 502 01

Vorstand auch per Mail erreichbar: info@armenier-frankfurt.de www.armenia.de

Միության հայկական շաբաթօրյա դպրոցի և պարի դասընթացները շարունակվում են միության հավաքատեղում, ամեն շաբաթ օր՝ ժամը 15:00-19:00: Լրացուցիչ առաջարկվում են նաև քանդակագործ Իշխան Նազարյանի՝ հայ կերպարվեստի (ամիսը երկու անգամ), Հէսսէնի շախմատային մրցանակակիր և մեր շաբաթօրյա դպրոցի սան Արսեն Աբրահամյանի՝ հայ շախմատի (ամիսը երկու անգամ), ինչպես նաև երաժիշտ Արեն Էմիրզյանի՝ երգ-երաժշտության դասընթացները (ամիսը մեկ անգամ):
Հասցեն՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

Հիշեցում. կարևոր տեղեկություն կանոնադրության փոփոխության վերաբերյալ
Ինչպես արդեն ներկայացված էր անցյալ շրջաբերականում, այս տարի տեղի կունենա հատուկ ժողով՝ քննարկելու կանոնադրության հնարավոր փոփոխությունները: Այդ կապակցությամբ նոր առաջարկներ ունեցող բոլոր անդամներին խնդրվում է օգտվել վերջին հնարավորությունից և մինչև **փետրվարի 20-ը** իրենց ցանկալի փոփոխությունների առաջարկները **գրավոր** հանձնել վարչությանը:

Նոր առաջարկ չափահասների համար՝ նորաստեղծ հայկական երգչախումբ
Գեղարվեստական ղեկավար՝ երաժիշտ Իրինա Հովհաննիսյան: Մասնակցել ցանկացողներին խնդրում ենք դիմել վարչությանը: Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

--------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** ---------

2013թ. փետրվար 22-ին՝ ուրբաթ՝ ժամը 19-ին - «C. Bechstein Centrum Frankfurt» երաժշտական կենտրոնում տեղի կունենա Վլադիմիր Խաչատրյանի աշակերտների դաշնամուրային համերգը: Հասցեն՝ C. Bechstein Centrum Frankfurt, Eschersheimer Anlage 45, 60322 Frankfurt:

******

2013թ. **փետրվար 23-ին՝ շաբաթ՝ ժամը 15-ին** - Միասնական այցելություն Մայնցի Գութենբերգ թանգարանի առանձնահատուկ ցուցահանդեսին. հայ տպագրության 500-րդ ամյակի առթիվ ներկայացվում են Հայաստանի տպագրության պատմությունը և գլուխգործոցները: Հետաքրքրողներին խնդրում ենք Մայնցի Գութենբերգ թանգարանում գտնվեն ժամը 14:45-ին և մինչև փետրվարի 15-ը վարչությանը տեղեկացնել (info@armenier-frankfurt.de): Միության հանդիպման վայրը և շաբաթօրյա դպրոցը այդ օրը փակ են: Հասցեն՝ Gutenberg-Museum Mainz, Liebfrauenplatz 5, 55115 Mainz:

2013թ. մարտի 1-ին, ուրբաթ, ժամը 20:00-ին տեղի կունենա երիտասարդ դաշնակահարուհի Լուսինե Խաչատրյանի թատերական «Շոպեն» համերգը, որը նվիրված է Շոպենի ծմմդյան 203-րդ ամյակին: Զեղչ տոմսերի համար կարող եք դիմել վարչությանը: Մանրամասն տեղեկություններ՝ www.internationales-theater.de: Հասցեն՝ Internationales Theater Frankfurt, Hanauer Landstraße 7 (Zoo Passage), 60314 Frankfurt:

******

2013թ. մարտի 3-ին՝ կիրակի՝ ժամը՝ 14:00-ին - Հէսսէնի Հայ Մշակութային Միության ընդհանուր տարեկան ժողով: Հասցեն՝ միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

******

2013թ. ապրիլի 24-ին՝ չորեքշաբթի՝ - 1915. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 98-ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ Մայնի Ֆրանկֆուրտում: Մանրամասն տեղեկություններ՝ շուտով մեր ինտերնետային կայքում՝ www.armenia.de և հաջորդ շրջաբերականում:

******

Միության միջոցառումների լուսանկարները մեր ինտերնետային կայքի տեղադրման համար. ցանկացողները կարող են իրենց մոտ ունեցած լուսանկարները ուղարկել վարչությանը հետևյալ հասցեով՝ info@armenier-frankfurt.de: